ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771, www.court.am

N ԴԴ-1-Ե-9062

« 19 » նոյեմբերի 2025թ.

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 125/3,
էլ. փոստի հասցե՝ artyom.hcp@gmail.com)

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների, տնտեսող լամպերի և ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում Դատական դեպարտամենտի և «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի միջև 15.10.2025թ. կնքվել է N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-4» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 20-րդ չափաբաժնով նախատեսված 1500 լիտր ապակի մաքրելու միջոցից 500 լիտր ապակի մաքրելու միջոցի մասով նախատեսվել են 88 000 (ութսունութ հազար) ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ: 2025թ. հոկտեմբերի 24-ին Դատական դեպարտամենտի N ԴԴ-3-Ե-Ե-8217 գրությամբ «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ին ուղարկվել է համաձայնագիր կնքելու առաջարկը, Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին կնքվելիք համաձայնագրի նախագիծը և առաջարկվել կնքել համաձայնագիր և ծանուցումը ստանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքված համաձայնագրի երկու բնօրինակները գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ:

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի կնքել և Դատական դեպարտամենտ չի ներկայացրել կնքված համաձայնագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետի պահանջները, ինչպես նաև «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի կողմից 2025թ. հոկտեմբերի 24-ին և 27-ին Պայմանագրի 20-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների մատակարարումից հրաժարվելու վերաբերյալ Դատական դեպարտամենտ ներկայացված գրությունները՝

2025թ. նոյեմբերի 19-ից «ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի հետ կնքած Պայմանագիրը 20-րդ չափաբաժնի մասով Դատական դեպարտամենտի կողմից միակողմանիորեն ամբողջությամբ լուծվում է:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կապ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների
համակարգման վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511-777, 511-788